

# ԿԵՆՍԱԳԻՐ ԵՒ ՆԿԱՐԱԳԻՐ

ԵԶՆԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՈՂԲԱՑԻՌ



(Տես յ էջ 273)

**Ս**ինքեի աստ Եղնկայ մեծութիւնը նկատեցինք նորա արտաքին գործոց՝ որ էին միանգամայն ուսումնական, և կենցաղալարութեան մէջ, որում զուզընթաց տեսանք միշտ իւր հանճարը և իմաստութիւնը։ Հոս պատշաճ է՝ որ իւր իմաստութիւնը զուտ ներքին և փոքր ինչ մանրազնին տեսութեամբ նկատեմք։ առ այս աղբիւր ունելով՝ ի հարկէ իւր իսկ վկայութիւնը, իւր զոչի ձայնը՝ ի գիրս Եղծ աղանդոց, յորում կը գտնէ Մարտին « վկայութիւն մի՝ գերազայն արժանեաց, վկայութիւն մեծ մատենազրի . . . Ու մի այլ վկայութիւն պիսի շգերազանցէք քան զայս, բաց ՚ի անոնցմէ՝ որ եթէ ՚ի սուրբ Մահակայ և Մեւրորայ արուած լինէին »։ Բայց մեք արդէն նոցա եղական վարումը նորա հետ՝ իրը վկայութիւն և աւելի քան զվկայութիւն իմացանք։

Այդ յառաջ վարելով մեր խօսքը, ո՞ր և է իմաստոյ մեծութիւնը պարզելու ժամանակ՝ երկու կէտեր կան զիտելու. նախ՝ գիտութեան զարգացման շափն այն զարու՝ յորում ծաղկեր է նա. երկրորդ՝ համեմատելի է զնա իւր ժամանակակից իմաստոնց հետ. եթէ սոյն երկու կէտով սկսիմք քննել, յայն ժամ լաւ կ'իմանամք Եղնկայ մեծութիւնը։ Եւ որովհետեւ հանրածանօթ է Ե զարու հմտութեան շափն և տարազ թէ մեր և թէ օտարաց մէջ, այսինքն թէ զիտութիւնն ո՞ր մասանց մէջ զարգացած էր և որո՞ց մէջ յետնեալ, մեք յիշելով համառօտիս Եղնկայ հմտութեանց ինչ ինչ նիւթերը, զանց կ'ընեմք նոցա մասին խորհրդածել՝ համեմատելով վարուն հմտութեան հետ, որ աւելի իւր զոց քննաւթեան կը վերաբերի. և առանց որոյ արդէն կարող է ընթերցողն հարկաւոր զաղափարը կազմել հեղինակին իմաստութեան նկատմամբ։

Մի անգամ միայն ակնարկելով աղանդոց փոքրիկ՝ այլ իրօք ընդարձակագյն մատեանը, լրոք ընթերցողն չէ կարող չնկատել նորա հեղինակի մէջ մտաւոր շտեմարան մի, յորում զետեղուած լինին ազգի ազգի առաւ մթերք, արդիւնք սեփական հանճարոյն և արտաքին հմտութեանց. այս է պատճառ՝ որ նա համասրապէս զինչ և է պայքարներու մէջ կը հրաჩրուի, և հաւասար յաջողութեամբ կը շարժէ և յաղթող կը հանդիսացնէ իւր սուրը։

իւր մսաց ուր աշքերն ամէն տեղ կը թափանցեն . նոցա առջև յայտնի էին երկինք (1) և երկիր , արարիչ և արարածք , հրեշտակ՝ մարդիկ և տառայ կամ զեք , նախասահմանաւթիւն նոցա և անձնիշխանութիւն , մեղք , մահ և յարութիւն , հոգի և մարմին , խնամակալութիւն և կանխազիտութիւն Աստուծոյ , բախտ , բարիք և չարիք . հեթանոսութիւն , զիցաբանութիւն և նորա հոչակողքն իսփողո և Հոմերոս , այլ և այլ ազանդք և աղանգաստեար և իմաստասէրք , հրւզ կամ նիւթ սկզբնական . ներքին և արտաքին պատմութիւնք , ազգային և օստարազգի առասպելք . անսատոնք առ հասարակ՝ ցամաքայինք և օգայինք , մարդոց և անսանց բնական ազգեցութիւնք և գործք , առասպելեալ կենդանիք . բյուեր և 'ի նոցանէ ծազած զանազան բժշկական արդինք . ջուր և ջրայինք , հուր կամ ջերմութիւն , օդ , բնական երևոյթք , արեգակն , լուսին , աստեղք , լոյս , և այլն : Ցեղեակ էր Եզնիկ այդ ամէն և այլ բազմաթիւ իրաց՝ նոցա այլ և այլ հանգամանօք . և իւր հմտութիւնը կը հոչակէ իմաստասիրի դրաւ , այսինքն՝ ոչ եթէ այդ ամէն իրաց վերայ , առ հասկացիր աւելի բնականաց և պատմականաց , — խօսեր է զատ զատ զլուխնեարով , գէթ 'ի գիրա ազանդոց , այլ ցիր և ցան , ուր կարևոր համարեր է՝ հաւատոց ճշմարտութիւն մի հաստատելու կամ մոլորութիւն մի հերքելու համար մէջ բերել զաննիք . և աւելի ճոխութեամբ խօսեր է զոցա այն կէտերու վերայ՝ որք իւր ճառից նիւթ են եղեր , ճոխութեամբ՝ ոչ այնքան բառ ընդպարանակութեան , որյափ բառ հոծութեան իմաստից . իսկ այլոց վերայ մերթ համառօս և մերթ փօքք ինչ ընդպարձակ : Այդ ամէն իրաց հմտութիւնք՝ որ հեղինակին մուսա յանկարծական և ըստ գիպաց բղխումներ են , կը վկայեն՝ թէ նա նոցա մթերքը գոնէ բաւական առաստութեամբ պատրաստ ունէր իւր մսաց մէջ . իսկ շատիցը լիսպէս : իւր ոճն ընդհանրապէս ապացուցական է , և սակաւ ուրեց լոկ վարդապետական : Բացատրութիւնն յստակ՝ լուսոյ պէս : Բնական զիտութեանց մէջ՝ որք զեռ այնշափ զարգացած չէին , ուրեց ուրեց զերծ չէ մնացեր լիփապակէ , ինչպէս և զրեթէ բաղդ հին զիտունք . ուսկայն շատ կետերու մէջ իւր վարդապետութեանց քան զայլոցն ուղղութիւնը պիսի տեսնեմք յետոյ : իսկ կրօնական յարդապետութեանց մէջ , որպիսի են՝ յաշնչէ արարութիւն , նախասահմանութիւն , ազատութիւն կամաց , չարիք , և այլ մի քանիք , ընդպարձակ՝ և այնպիսի անհերքելի փաստերով և հմտութեամբ կը ճառէ , որ ընթերքողն կը կարծէ՝ թէ այն գրիչն յասուկ է արգի դարուց , յորս ամէն կարծիք շրջապատուած են բիւր ապացոյցներով (2) . զար

(1) Ցեղեաց թուանշամքը զանց ըրինք , շուզերով դիզել զայնա աւելի քան որս շափ են նիւթոց թուած մասունք . զի վերջինքս ցրուած են հատուած հատուած . և թէ էջերը գտնել ցանկացողք կարող են գտնել զայնա աղանդոց գրոց ցանկի մէջ :

(2) Վետտէր այսպէս կ'ըսէ . և Մի կողմէն (Եզնկայ) անկեղծութիւնն (սուրբ գիրքը վկայ կոչելու , ուր կը պակասի մտաւոր փաստ) , և բնագիտական ընդպարձակ հմտութիւնն , իսկ միւս կողմէն սրամտութիւնն և տեսութիւնքն՝ Եզնկայ դրուածքը հայրախօսական մատենագրութեան մէջ իրրու միակ հրապուրիչ երեւայթ կը հանդիսացնեն » ...

մանք և հիացումն կը պաշարեն գնա . — մանաւանդ երբ տեսնէ վաղոց քարոզուած 'ի նմանէ՝ նաև արդի ժամանակաց (լատին աստուածաբանից) ծնունդ համարուած մի քանի վարդապետութիւնը . զոր օրինակ այն՝ թէ Աստուած կարող էր կանուխ 'ի յաւիտենից ասեղծել զաշխարհ , և ինչո՞ւ շատեղծեց (232) . թէ Աստուած 'ի յափսենից կ'արարչագործէր , տիեզեռաց պատկերը իւր մոտաց մէջ ունելով (235 , 238) . թէ աստեղք 'ի հրեշտակաց կը կարծավին շարժէլ (241) , թէպէտ ինքն Աստուածոյ կու տայ . և այլն . — եւ ընթերցողն կը մկի փոքր ինչ արհամարհանօք նայել մեր ինքնապարծ զարոց վերայ :

Սակայն Եզնիկյ հմտութեան փայլն՝ որչափ և չքնաղ ըստ իմաստափրական և աստուածաբանական մասին , կը նաւեմանայ նկատմամբ արտապին զիւառութեանց , երբ տեսնեմք թէ նա յայնա մուրացող է յայլոց . զի տեսնելով թէ իշղ աղանգոց և թարսողի վեցօրեայ ճառց շատ անգամ մի և նոյն նիւթոց նկատմամբ կը ճառեն նման իմաստներով , բնական կը լինի հետևեցընել՝ թէ Եզնիկ այն մասանց մէջ իւր հմտութիւնը թարսզէն տացեր է , և հետևող է նորա . թէ նա իւր իննամեեայ ուստունական շրջանի մէջ յիթեսիա և Յունաստան ուսաւ ոչ եթէ զիտութիւն , այլ ասպազյին մէջ զայն յայլոց մուրանապու արուեստը : Սակայն Եզնիկյ նկատմամբ այդ հետեւաթեան հասնելու համար բաւական չէ զիտել՝ թէ նիւթերն մի և նոյն են , այլ հարկ է յաւելով ևս առ երկու զիտուութիւնքը . առաջին՝ արգեօք մի և նոյն նիւթոց մէջ առ հասարակ երկուքն այլ մի և նոյն կարծիք ունին՝ թէ իրերաց հակառակ են . երկրորդ՝ արգեօք մի և նոյն նիւթոց մէջ երկուքն այլ հաւասար հմտութիւն ունին , կամ հետևող կարծեցեալն նուանդ թէ աւելի անշեակ և քան հնետուելին : Այս երկու կէաը երբ նկատեմք , այն ժամանակ կը մկիմք տարափուալիլ մեր զատողութեան հիմնաւորութեան մասին . մանաւանդ թէ կը սկիմք հակառակ համեղումն ունել , և գանել զԵզնիկ հեղինակ՝ և ոչ հետևող :

Տեսնեմք այսմ ըստ առաջին զիտուութեան՝ նոցա հակառակ կարծիցները մասամբ , համեմատութիւնը թարսողի պազդիարէն օրինակին (Եւգ . Փիալոնի) հետ ևս դործելով :

1 . Թարսեղ (Էջ 442 հայ թրգ.) կը յիշեցնէ իմաստափրաց վարդապետութիւնը , թէ լուսին երբ կը մօտենայ արեգական՝ կը նուազի իւր լրցն . և երբ կը հեռանայ՝ կ'աճի : իսկ Եզնիկ (240) յիշերով այլ իմաստնոց կարծիքը , թարսզի հակառակ կ'ըսէ՝ թէ որչափ կը մօտենայ , կ'աճի իւր լրցն , և որչափ կը հեռանայ , կը նուազի :

2 . Թարսեղ (442) և Եզնիկ (244) միապէս կը հակառակին իմաստափրաց այն կարծեաց՝ թէ լուսին իսրմէ լրյա շունի և արեգակէն կ'ընդունի . և նորա փոփախնենքը թարսեղ կը համարի նորա սեփական լրուց ցընգելէն և վերստին հաւաքռուելին . իսկ Եզնիկ (246) կը յիշեցնէ այլ իմաստնոց ումանց կարծիքը , թէ գոցցես պատենի մէջ կը մօտնէ և կ'ելնէ . և նոցա չհակառակելովն զինքն համաձայն կը ցուցընէ նոցա՝ և տարածայն թարսողի :

3. Բարսեղ (49-51) կ'ուսուցանէ՝ թէ մեզ երևեալ գմբեթարդ երկնից վերայ տափարակ է, և հոն են « ջուզք որ՝ ի վերայ քան գերեինա » . ի՞նչ պէս կը վարդապետէ նաև Ռսկերերան (Մեկն. Եփես. Էջ 874), վերապյն մասն կոչելով « զոքեալ ծործորացդ հովասար » : Իսկ Եղնիկ (197, 249) կը հակառակի և կ'ըսէ՝ թէ լոկ երկրի վերայ (ծովեր) և անդնդոց մէջ է լուրն . և արուաբոյ երկրի ոչ ինչ է բաց յաստեղաց :

4. Բարսեղ (47) երկրիս յենարանի մասին զանազան կարծեաց մէջ վարանելով, զինքն հակառակ կը ցուցընէ ընդունելու ըստ Սաղմոսի՝ թէ ցուցէ յոց վերայ նատած կը ծփայ, ասկայն Աստոծոց՝ և ոչ բնական զօրութեամբ : Իսկ Եղնիկ (197) կը մխտէ զայդ, և վայելուշ եղանակաւ կը ցուցընէ՝ թէ ոչընչի վերայ կեցած է :

5. Բարսեղ (433) խօսելով լուսնի փոփոխութեան արգասեաց մասին, կը յիշէ Եւրոպէի ջուրց տեղաստութիւնը՝ վկայութեամբ բնկաց : Եղնիկ ևս (244) կ'աւանդէ նոյնը՝ մէջ բերուած իմաստասէրներէն այլ պարապայիւ այսինքն՝ ի վկայութիւն լուսնոյ մէջ գտուած կարծեցեալ լուսաւոր հիւթոյ աճման և նուազման, զոր ինքն լընդունիր : Եւ ահա սոյն կէտի մէջ իւր աղբիւրն Բարսեղ չէ :

6. Բարսեղ (419 զդդ. թրդ.) կը կոչէ լոյսը « յատակ, պարզ և աննիշը էսոթիւն », ուր հայն (410). անաղոյ կը զնէ, յունարէն ձնլօչը ձևնէն կարգալով : Իսկ Եղնիկ (96) կ'ըսէ. « նուզք է տարր լուսոյ. այլ զի պամարդ զննի՝ մարմնաւոր է », ըստ իւր սահմանին՝ թէ « որ ինչ ի զգայնոցն շօշափի կամ զննի կամ ազդի՝ այն մարմնաւոր է . և որ զգայնց ոչ ազդի՝ մամարմին » :

Բայց երկրորդ տեսութեան, տարբերաթիւն հմտութեանց :

7. Եղնիկ երրորդ զրոց սկիզբը (199-204) համաստաելով իմաստասիրաց լուսնի և աստեղաց նկատմամբ ըրած վարդապետութիւնը, ինչպէս և այլ տեղեր, ունի այնպիսի կէտեր՝ որք Վեցօրէից մէջ (ճառ. Զ) չեն գտուիր, և կէտեր՝ որ հակառակ են Բարսղի, ինչպէս տեսանք նախորդ 4 վկայութեան մէջ :

8. Յօդոյ անկման համար կ'ըսէ Բարսեղ՝ (430) թէ երբ արեգակն կը ծագի, զեփիւր կը հանէ, և երկնոցն՝ մինչ զեր պարզ է՝ ցող կը կաթեցընէ : Իսկ պատճառաբինզիրն Եղնիկ (194) կ'ըսէ՝ թէ երբ արևուն ճառապայմբ կը սփոխն օգոյ վերայ, որ զիշերը ջրոց խոնաւութեամբ յագեցած էր, կը ցրուեն խոնաւութիւնը, որ կաթիլ կաժիլ յերկիր կը թափի :

9. Լուսնոյ բակի համար կ'ըսէ Բարսեղ (415), թէ յառաջ կու գայ՝ լուսնի՝ ի յոց (1) շրջապատռելէ, ուր հայ թարգմանիչն յամպոց՝ կը զնէ : Իսկ Եղնիկ (186) կ'ըսէ՝ թէ օգոյ խոնաւութիւնն է, « որ ՚ի նա (՚ի լուսինն) չհասեալ՝ բակ առեալ ծրանայ շուրջ զնովլաւ ». որով անձրն կը գուշակուի : Նոյն երեսոյթը ճրազի վերայ ևս կը ցուցընէ Եղնիկ իւր հմտութեամբ :

(1) Հասկանալի է թերևս այն լուսերը, զոր կը զնէ երկրէն դուրս, ըստ առաջն Յորդ խնդրոյն :

4. Հեթանոսը կը հոյակէին՝ թէ կախարդը լուսինը յերկիր կ'իջեցնեն.  
Բարսեղ (134) կը ժխտէ զայդ, ընզարձակ խօսքով լուսնի մեծութիւնը հա-  
ւաստելով նորա լուսոյ տարածութենէն, և անտի անկարելի ցուցինելով զայն:  
Եղնիկ ևս (247) կը ժխտէ զայն՝ նոյն մեծութեան վկայութեամբ, որ բնա-  
կան փառա մ'է, երկու խօսքով. բայց զայդ արդէն հեթանոսը այլ գիտէին  
և հանդերձ այնու կը հակառակէին. ուստի Եղնիկ կը յաւելու ոյն անդե-  
մաղրելի փաստն այլ. « Քանի՛ անթիւ բիւրոց կախարդաց են յերկիր. և եթէ  
իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ իջուցանել կարէր զնա, ոչ երբէք տային նմա-  
ելանել յերկին ». Նոյնպէս և ուրիշ փաստեր (248): Եղնիկ. Հեթանոսաց  
նկատմամբ սա երկու կէտերն այլ կը յաւելու. « Պիւի նմանել լուսնի բար-  
բանչեն », և յետ յերկիր իշնելց « կիթիցի », որոս բարսեղ չունի :

5. Բարսեղ (146—124) և Եղնիկ (154—163) խօսելով աստեղատանց  
բախստաւորութեանց կամ թշուառութեանց, մեծութեան կամ նուստառութեան  
պատճառականութեան մասին՝ ըստ հեթանոսաց, որ ծանօթ էր բոլոր աշխար-  
հի, մին աւելի տեղեկութեամբ կը ճառէ այս ինչ կետի մէջ, և միւն այն  
ինչ. և հերքման փաստերու մէջ, յօրս միայն կարող պիտի լինէինք ըստ՝  
թէ մին միւսոյն է հետեւր, ընդհանրապէս իրարմէ կը տարբերին :

6. Բարսեղ (4, 7, 25—28) երեք տեղ կը յիշեցնէ տիեզերաց 'ի հիւ-  
զէից կազմութեան իմաստասիրական վարդապետութիւնը. և վերջին անզամ  
կոռուելով նորա դէմ, այնքան անկատար և ամենահամառօտ մի երկու խոր-  
հրպածութեամբ քան թէ փաստերով կը հերցէ, որ հակառակորդն կը հե-  
ռանայ մեծ շնորհակարաւթեամբ՝ այնցան զիւրաւ և տոանց նեղութեան պըր-  
ծելուն համար: Իսկ Եղնիկ (24—27, 29—34) այնքան ճոխ, այնքան երկ-  
սայրաբան և անխուսափելի ապացոյներու մէջ կը կաշկանդէ զժշնամին,  
մինչև մահու քրափինք թափել կու տայ անոր: Ընթերցողն կարող է այդ  
երկու փոքրն այլ տեսնել նոցա զրոց մէջ, և բարսղինը մանաւանդ բնագրի  
մէջ՝ ուր աւելի համառօտ է և ամփոփ :

Զանց կ'ընեմք յիշել միա մի երկու նման բնական տեղեկութիւնքը կամ  
օրինակները, որոց մասին ամենայն մարդկային էակ, թէպէտ և տգէտ, կա-  
րող է խօսիլ, բաւական է թէ զգայարանքներէ զորկի շինի, և չէ կարօտ  
օտարէն առնլու կամ տեղեկանալու. իսկ ո՛րչափ աւելի, եթէ փոքր ինչ  
զիտութիւն և անձամբ խորհրդածելու յարմարութիւն ևս ունենայ: Եւ բարսղի  
հայ թարգմանութեան և Եղնկայ մէջ ուրեք ուրեք երեցած բաւական նմանու-  
թիւնն՝ ըստ բնագրաց աննմանութիւն է:

Այս և այլ սոյնպիս զիտութիւներէն սա երեք հետևութիւնքը կարելի  
է հանել. առաջին, թերևս չեմք սիալիր, եթէ ըսեմք՝ թէ Եղնիկ բնաւ չէ  
կարդացեր վեցօրէքը, գրչապութեան պատճառաւ իւր զարուն զրոց սակա-  
ռութիւն լինելով. որովհետև. յետ տեղեկանալու այնպիսի հոչակաւոր վարդա-  
պետի 'ի ժամանակին յարգելի կարծեաց, գուցէ չէր ընդդիմանար նոցա.  
զարձեալ՝ առաջին Յրորդ իննպրոյն նկատմամբ նմա և նորա կարծակցաց իբր

պատճառախնդիր առարկուաց 'ի Սուրբ գրոց՝ հեղնաբար պատասխանել և խելք ուսուցանել՝ թէ ի՞նչպէս հարկ է հասկանալ և միացնել սուրբ գրոց իրերաց հակառակ կարծուած խօսքերը (193): — Երկրորդ, Եզնիկ բնաւ կարօտ չէր Բարսղի՝ իւր մեզ թողած գրութեան համար. որովհետև հմտութեանց այն կէտերը՝ որոց մասին երկուցն այլ ճառեր են, ինչպէս տեսանց՝ Եզնիկ շատ անգամ տեղի տեղեկութեամբ է գրեր. զարձեալ Եզնիկ ունի այնշափ որիշ կետեր, զորս Բարսեղ շունի, զոր դիւրին է իմանալ նոցա համեմատութեանէն. ապա որեմն Բարսեղ Եզնիկայ հմտութեան աղքիւ չէր կարող լինել: — Երրորդ, գիտութեան վերաբերեալ այն կէտերն, զորս զժուարին էր Եզնիկայ փորձառութեամբ կամ անձին ուշիմութեամբ առանալ, յիրաւի Յունաստանի մէջ ուսաւ, և ոչ 'ի Բարսղէ. որովհետև ինքն իսկ Բարսեղ յայլոց ուսաւ, այն պատճառաւ իւր գրոց մէջ շատ անգամ կը կրկնէ « ասեն » բառը: Դիտութեանց այն զանազան մասունքն ըստ նիւթյոն ծանօթ էին ամէն համառ լսարանաց, այլ ըստ կարծեաց կը զանազանէին նոցա մէջ: Ասոի է զանառ զանութիւն կարծեաց Բարսղի և Եզնիկայ և այլ հարց կամ զիտնոց մէջ, որք այլ և այլ դրութեանց աշակերտած են, որպէս յայտնի կը տեսնալի, և ոչ մին միւսոյն, կամ Եզնիկ Բարսղի: — իսկ թէ ընդ հակառակն հանգերձ այսու կարգացած համարիմք Վեցօրէքը, հարկ է ըսել՝ թէ նա յետ տեղեկանալու Բարսղի կարծեաց, բնաւ մոտադրութիւն և հաւանութիւն չէ տուած նոցա իբրև սիալ, իւր կարծեաց հակառակ տեսնելով. և միթէ այդ զօրծն ապացոյց չէ Եզնիկայ մուաց ազատ և անկաշկանդ լինելուն, և իւր հմտութեան վերայ ունեցած արդար վստահութեան: Նոյնպէս կը հետեւի և այս՝ թէ Եզնիկ աւելի հմտաւ է քան զբարսեղ. զի նա ոչ միայն նորա հմտութեանց տեղեակ եղաւ այդ ընթերցմամբ, այլ և ծանօթ էր նորա հակառակ և շունեցած կարծեաց, ոմանց ինքն լինելով հեղինակ և զոման արտաքին հմտութեանէ ստանալով:

Շարայարելի

Հ. Վ. Պ.

